ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՊՊԱ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱԾՁԲ-22/1

ք. Երևան «05» «09» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունների ժամանակավոր կատարող՝ Գրիգոր Հարությունյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 31.01.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱԾՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Համաձայն ՀՀ կառավարության 17.06.2022թ. թիվ 905-Ա որոշման՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը տրամադրվել է մեկ միավոր տրանսպորտային միջոց՝ ՎԱԶ 212140-0000070-20 BRANTO մակնիշի, նշված տրանսպորտային միջոցի, մինչև 2023 թվականի հունվարի 12-ը, ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) համար, լրացուցիչ կպահանջվի 27.000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ, ուստի Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 1.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը պատկանող 79 հատ տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

1.2 Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է՝ 2.697.000 (երկու միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1. Պայմանագրի գնի 100%-ը 2.697.000 (երկու միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին, որպես կանխավճար (2.670.000 ՀՀ դրամը 2022թ.-ի առաջին եռամսյակին արդեն վճարվել է):

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազումներ(պահումներ) կատարելու ձևով»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփափոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 63	ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 02589581
ՔԿ Ծառայություն	Գործադիր տնօրեն
Գ.Հարությունյան	Գ.Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«05»«09» 2022 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	66511170/1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ) ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հաշվեկշռում հաշվառված թվով 79 տրանսպորտային միջոցների համար	դրամ	2.697.000	1	ք. Երևան, Արշակունյաց 63	2022թ.-ի ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց 63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ Ծառայություն
Գ. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
Գործադիր տնօրեն
Գ. Գրիգորյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«05»«09» 2022 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	66511170/1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	2.670.000	2.670.000	2.697.000	2.697.000	2.697.000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց 63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ Ծառայություն
Գ.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
Գործադիր տնօրեն
Գ.Գրիգորյան

(ստորագրություն)
Կ.Տ.